ՊԱՅՄԱՆԱԳԻՐ « ՀՀ ԿԱ Ո ՃՈ-ԱՊՇՁԲ-11/02 »

Պետության կարիքների համար երթևեկության կանոնների նկատմամբ վերահսկողության համակարգերի ձեռքբերման /գնման/ և դրանց սպասարկման /ծառայությունների մատուցման/

ք. Երևան «13» 06 2011թ.

«ՀՀ ԿԱ ՈՍ «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության պետ Մ.Օհանյանի, որը գործում է ՀՀ ճանապարհային ոստիկանության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Պատվիրատու». մի կողմից, և «Սեքյուրիթի-Դրիմ» ՍՊ ընկերությունը, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Գալստյանի, գործելով համաձայն Ընկերության կանոնադրության, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, /Այսուհետ միասնաբար՝ Կողմեր/ կնքեցին սույն պայմանագիրը /Այսուհետ՝ Պայմանագիր/ հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված ժամկետներում Պատվիրատուին ի սեփականություն հանձնել /Վաճառել/ սույն պայմանագրի 1.3. ենթակետում սահմանված երթևեկության կանոնների նկատմամբ վերահսկողության համակարգեր /Այսուհետ՝ Ապրանք/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրանց դիմաց համաձայն սույն պայմանագրի:
1.2. Սույն պայմանագրի 1.1. ենթակետում նշված Ապրանքը Պատվիրատուին ի սեփականություն հանձնելուց անմիջապես հետո Կողմերը պայմանավորվեցին, որ Պատվիրատուի հանձնարարությամբ սույն պայմանագրով սահմանված ժամկետներում սեփական միջոցներով Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրի գործողության ընթացքում մատուցել Ծառայություններ, մասնավորապես, սպասարկել, շահագործել և վերանորոգել սույն պայմանագրի 1.1. ենթակետում նշված Ապրանքը /Այսուհետ՝ Ծառայություն/ ըստ իր նշանակության և սույն պայմանագրով սահմանված նպատակներին համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել մատուցված Ծառայության դիմաց համաձայն սույն պայմանագրի:
1.3. Սույն պայմանագրի 1.1. ենթակետում նշված վաճառվող Ապրանքը ներառում է
1.3.1.Երթևեկության արագության նկատմամբ վերահսկողության համակարգերը /տրանսպորտային միջոցների երթևեկության արագության չափման տեսախցիկներ /ԱՀՏ/, արագության վերահսկողության այլ սարքավորումներ, անհրաժեշտ ենթահամակարգեր, համակարգչային և այլ ծրագրեր և այլն/,
1.3.2.Երթևեկության կարմիր լույսի /ազդանշանի/ նկատմամբ վերահսկողության համակարգերը / Երթևեկության կարմիր լույսի նկատմամբ վերահսկողության այլ սարքավորումներ, անհրաժեշտ ենթահամակարգեր, համակարգչային և այլ ծրագրեր և այլն /,
1.3.3 Երթևեկության մշտադիտարկման համակարգ (երթևեկության այլ կանոնների նկատմամբ վերահսկողության համակարգերը), մասնավորապես
1.3.3.1 Հանդիպակաց երթևեկելի գոտի դուրս չգալու կանոնի խախտման նկատմամբ վերահսկողության համակարգ,
1.3.3.2. Կանգառի և կայանման կանոնների խախտումների նկատմամբ վերահսկողության համակարգ,
1.3.3.3. ճանապարհային նշանների պահանջները չկատարելու նկատմամբ վերահսկողության համակարգ,
1.3.3.4. ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելու նկատմամբ վերահսկողության համակարգ:
1.4. Սույն պայմանագրի 1.3.3. կետում նշված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումները սկզբնական փուլում վերահսկվում են մշտադիտարկման համակարգի միջոցով հետագայում՝ սույն պայմանագիրը կնքելուց երկրորդ տարվանից սկսած ավտոմատ համակարգի միջոցով:
Ընդ որում, սույն պայմանագրի 1.3.3. կետում նշված համակարգերի ձեռք բերման, որակի, տեսակի, քանակի, ինչպես նաև դրանց սպասարկման, շահագործման և վերանորոգման հատուկ բոլոր պայմաններն ու առանձնահատկությունները, դրանց տեխնիկական բնութագրերը և այլ անհրաժեշտ ու պարտադիր պայմանները սահմանվում են սույն Պայմանագրի գործողության ընթացքում Կողմերի միջև սույն պայմանագրով սահմանված ժամկետում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրերով:
1.5. Սույն պայմանագիրը կնքելու պահին Կատարողը հավաստիացնում է, որ սույն պայմանագրի 1.3. ենթակետում նշված Ապրանքի նկատմամբ Կատարողն ունի սեփականության իրավունք կամ այն ազատորեն օտարելու /սեփականության իրավունքը փոխանցելու/ իրավասություն /լիազորություն/, ինչը հավաստվում է Ապրանքի նկատմամբ սեփականությունը հավաստող համապատասխան փաստաթղթերով կամ համապատասխան սեփականատիրոջ կողմից տրված համապատասխան իրավատությամբ և/կամ լիազորագրով:
1.6. Սույն պայմանագիրը կնքելու պահին Կատարողը նաև հավաստիացնում է, որ սույն պայմանագրի 1.3. ենթակետում նշված Ապրանքը կալանքի, արգելանքի տակ չի գտնվում, դատական վեճի առարկա չէ, այլ կերպ ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով:
1.7. Սույն պայմանագիրը կնքելու պահին Կատարողը հավաստիացնում է, որ սույն պայմանագրի 1.2. ենթակետում նշված ծառայությունը մատուցելու համար ունի համապատասխան իրավասություն, լիազորություն, ձեռք է բերել համապատասխան թույլտվություն /լիցենզիա/, որակավորում և այլն, ունի համապատասխան ֆինանսական, գույքային և աշխատանքային ռեսուրսներ, ունի համապատասխան մասնագիտական գիտելիքներ և աշխատանքային փորձ, ձեռք է բերել բոլոր անհրաժեշտ հեղինակային կամ այլ հարակից իրավունքներն օգտագործելու թույլտվություն, այդ թվում նաև ապրանքային և սպասարկման նշաններն օգտագործելու իրավասությունը:

## 2. Ապրանքի և Ծառայության ձեռք բերման ընդհանուր պայմանները

2.1. Կողմերը պայմանավորվում են, որ սույն պայմանագրի 1.1. ենթակետում նշված համակարգերը, դրանցում ներառված ենթահամակարգերը և այլ սարքավորումները տեղադրվում են փուլային տարբերակով, որի ժամանակացույցը, դրանց տեղադրման կարգն ու պայմանները հետագայում կողմերի փոխադարձ համաձայնությամբ

կարող է անհրաժեշտության դեպքում փոփոխության ենթարկվել, եթե դա են պահանջում սույն պայմանագրի 2.11. կետում նշված պայմանագրի նպատակի իրագործման անհրաժեշտությունն ու կարևորությունը:

2.2. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրի ողջ գործողության ընթացքում ընդհանուր առմամբ Պատվիրատուին սույն պայմանագրի 2.8 կետով սահմանված կարգով ի սեփականություն հանձնել

2.2.1. 195 միավոր Երթևեկության արագության վերահսկողության համակարգ,

2.2.2 240 միավոր երթեկության մշտադիտարկման համակարգ

2.2.3. 90միավոր կարմիր լույսի /ազդանշանի/ առկայությամբ երթևեկության նկատմամբ վերահսկողության համակարգ:

Սույն կետում նշված համակարգերի ընդհանուր քանակությունը համարվում է նվազագույնը և կարող է փոփոխության ենթարկվել միայն Պատվիրատուի համաձայնությամբ:

2.3. Սույն պայմանագրի 2.2 ենթակետում նշված համակարգերից բացի Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին ի սեփականության հանձնել երթևեկության այլ կանոնների նկատմամբ վերահսկողության անհրաժեշտ համակարգեր, որոնց քանակությունը, ժամկետները ու այլ պայմանները Կողմերը կորոշեն սույն պայմանագրին կից հավելվածներով կամ լրացուցիչ համաձայնագրերով:

2.4. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագիրը կնքելու պահից սկսած առաջին հինգ տարվա ընթացքում Պատվիրատուին հանձնել՝

2.4.1. Երթևեկության արագության վերահսկողության և մշտադիտարկման համակարգ, ընդ որում, հետևյալ փուլերով՝

- 2011թ. ընթացքում՝ Խախտումների արձանագրման կենտրոն, 15 ԱՃՏ, 50 դիտարկման տեսախցիկ (այսուհետ՝ ԴՏ) ք. Երևան, 20 ԴՏ Երևանի Կենտրոնի մարդաշատ վայրերում
- 2012թ. ընթացքում 50 ԱՃՏ ք.Երևան և միջպետ. ճանապ, 45 ԴՏ ք. Երևան
- 2013թ. ընթացքում 50 ԱՃՏ ք.Երևան և միջպետ. ճանապ, 60 ԴՏ ք. Երևան
- 2014թ. ընթացքում 50 ԱՃՏ ք.Երևան և միջպետ. ճանապ, 60 ԴՏ ք. Երևան
- 2015թ. ընթացքում 30 ԱՃՏ ք.Երևան և միջպետ. ճանապ, 45 ԴՏ ք. Երևան

2.4.2. Սույն պայմանագրի 2.4.1. ենթակետում նշված համակարգը առաջին փուլով տեղադրելուց հետո երկու տարի անց

90 միավոր կարմիր լույսի /ազդանշանի/ նկատմամբ վերահսկողության համակարգ, ընդ որում, հետևյալ փուլերով՝

- 2013թ. ընթացքում 10 հատ անհրաժեշտ սարքավորումներ՝ Երևան քաղաքում
- 2014թ. ընթացքում 20 հատ անհրաժեշտ սարքավորումներ՝ Երևան քաղաքում և միջպետական ճանապարհներին.
- 2015թ. ընթացքում 20 հատ անհրաժեշտ սարքավորումներ՝ Երևան քաղաքում և միջպետական ճանապարհներին.
- 2016թ. ընթացքում 20 հատ անհրաժեշտ սարքավորումներ՝ ՀՀ այլ քաղաքներում և միջպետական ճանապարհներին.
- 2017թ. ընթացքում 20 հատ անհրաժեշտ սարքավորումներ՝ ՀՀ այլ քաղաքներում և միջպետական ճանապարհներին:

Ընդ որում, սույն պայմանագրի 2.4.1. ենթակետում և 2.4.2. ենթակետում նշված փուլերը /այդ թվում՝ ժամկետները/ և քանակությունները, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող «Երթևեկության կանոնների նկատմամբ վերահսկողության համակարգի տեխնիկական բնութագրեր» -ում նշված փուլերը /այդ թվում՝ ժամկետները/ և քանակությունները կարող են կողմերի փոխադարձ համաձայնությամբ ենթարկվել փոփոխությունների:

2.5. Սույն պայմանագրի գործողության 2-րդ տարվանից սկսած սույն պայմանագրի 1.3.3. ենթակետում նշված Համակարգերը մատակարարվում է Կողմերի կողմից փոխադարձ պայմանավորված ժամկետներում և փուլայնությամբ:

2.6. 2013թ-ից սկսած սույն պայմանագրով սահմանված 2.2. ենթակետում նշված Համակարգերի սույն պայմանագրի 2.2.1. 2.2.2. և 2.2.3. ենթակետերով սահմանված քանակությունը լրացվում, իսկ սույն պայմանագրի 2.3. ենթակետով սահմանված համակարգերի քանակության մատակարարումն ու տեղադրումն իրականացվում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կազմված ժամանակացույցին ու պայմաններին համապատասխան:

2.7. Սույն պայմանագրի 2.2. և 2.3. ենթակետերում սահմանված Ապրանքը Կատարողը կարող է հանձնել Ստացողին, որը ՀՀ ԿԱ Ոստիկանության Ճանապարհային Ոստիկանությունն է:

2.8. Սույն պայմանագրի 1.1. ենթակետում նշված Ապրանքի հանձնումը տեղի է ունենում Պատվիրատուին կամ սույն պայմանագրի 2.7. ենթակետում նշված ստացողին փաստացի հանձնելով կամ վերջիններիս հետ համաձայնեցված վայրում և նրանց հանձնարարությամբ Ապրանքի՝ սույն պայմանագրով սահմանված կարգով տեղադրելով և/կամ ամրացնելով: Ընդ որում, սույն պայմանագրի 1.1. ենթակետով նախատեսված համակարգերի տեղադրման վայրերը համաձայնեցվում են Ստացողի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավասու մարմինների հետ: Կողմերը կարող են նաև փոխադարձ համաձայնությամբ փոփոխել սույն պայմանագրով սահմանված Ապրանքի տեղադրման և/կամ տեղակայման վայրերը:

2.9. Ապրանքը սույն պայմանագրի 2.8. ենթակետում սահմանված եղանակներով հանձնելուց հետո 20 օրվա ընթացքում Կողմերը յուրաքանչյուր դեպքում ստորագրում են ընդունման-հանձման ակտ, որում նշվում են հանձնված Ապրանքի քանակությունը, տեսականին, որակի մասին համապատասխան տվյալները: Ընդ որում, Պատվիրատուն դառնում է Ապրանքի սեփականատեր՝ սույն կետում նշված ընդունման-հանձման ակտը երկկողմանի ստորագրելու (և/կամ կնքելու) պահից, որի դեպքում Ապրանքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկն անցնում է Պատվիրատուին:

2.10. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել Պատվիրատուին ի սեփականության հանձնված Ապրանքի սպասարկում, այն է՝ շահագործել, վերանորոգել և սպասարկել այն ըստ իր նպատակային նշանակության՝ համաձայն սույն պայմանագրի հավելվածների: Կատարողը նաև պարտավորվում է սույն պայմանագրի կատարման ավարտից սկսած առնվազն հինգ տարի ժամանակահատվածով իրականացնել Ապրանքի սպասարկման, շահագործման և վերանորոգման ծառայություններ, որոնց դիմաց վճարման կարգն ու պայմանները սահմանվում են կողմերի միջև կնքված լրացուցիչ համաձայնագրերով կամ պայմանագրերով: Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրի գործողության ընթացքում կազմակերպել սույն պայմանագրով սահմանված համակարգերի շահագործման դասընթացների կազմակերպում, ուսուցում և վերապատրաստում:

2.11. Սույն պայմանագրի 2.10. ենթակետում նշված ծառայությունը ներառում է Տրանսպորտային միջոցների (ՏՄ) երթևեկության արագության վերահսկողությունը, ճանապարհների վտանգավոր և այլ տեղամասերում շարժական և/կամ անշարժ տեղադրված արագաչափերի միջոցով սահմանված արագությունը գերազանցած, ինչպես նաև կարմիր լույսի /ազդանշանի/ տակ սահմանահատած, ներառյալ նաև ճանապարհային երթևեկության այլ կանոնների համապատասխան խախտումներ թույլ տրված տրանսպորտային միջոցների և դրանց սեփականատերերի հայտնաբերումը, դրանց ֆիքսված ժամանակահատվածում նկարահանումը, այդ տրանսպորտային միջոցների

նույնացումն ու համապատասխան սուբյեկտների նկատմամբ վարչական ներգործություն իրականացնելու միջոցով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքերի նվազեցման հասնումը:
2.12. Սույն պայմանագրի 2.11. ենթակետում նշված Ծառայությունը մատուցելու նպատակով Կատարողը ստեղծում է Խախտումների Արձանագրման Կենտրոն (ԽԱԿ), որի միջոցով էլ իրականացնելու է սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը, մասնավորապես, բայց և չսահմանափակվելով դրանցով՝
• պարբերաբար հավաքագրել, մշակել, դիտել, և դասակարգել արագության չափման տեսախցիկների /ԱՀՏ/, ռադարների և այլ համակարգերի կողմից գրանցված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքերի էլեկտրոնային պատկերները՝ համապատասխան ծածկագրերով տեղակայելով դրանք այդ նպատակի համար ստեղծված համապատասխան ինտերնետային կայքում:
• ԽԱԿ-ում ներառել տրանսպորտային միջոցների հաշվառման Համարանիշերի Ավտոմատ Ճանաչման համակարգ (ՀԱՃ), որն անհրաժեշտ է ավտոմատ կերպով համարանիշերի կոդավերծանման միջոցով բացահայտելու խախտում կատարած սահմանված կարգով հաշվառված տրանսպորտային միջոցի համարանիշը,
• Համարանիշերի ավտոմատ ճանաչման համակարգի միջոցով կոդավերծանումն չապահովելու դեպքում ապահովել կոդավերծանման համակարգի ինքնուրույն (ոչ ավտոմատ) գործունեությունը, որը հնարավորություն կտա օպերատորներին ինքնուրույն բացահայտելու համարանիշը,
• իրականացնել խախտում կատարած տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ բացահայտումը հաշվառված տրանսպորտային միջոցների ճանապարհային ոստիկանությունում շահագործվող ավտոմատ տեղեկատվական համակարգի (ՃՈ ԱՏՀ) տվյալների հենքի միջոցով,
• ապահովել վարչական իրավախախտման արձանագրության ու վարչական իրավախախտման գործով որոշման կազմումը՝ համաձայն ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի,
• ապահովել և/կամ իրականացնել սույն պայմանագրով սահմանված Ապրանքի երաշխիքային և այլ սպասարկումը, վերանորոգումը, անխափան շահագործումը:
2.13.Սույն պայմանագրի 2.12. ենթակետում նշված ԽԱԿ-ի բնականոն գործունեությունն իրականացնելու նպատակով ՀՀ Ճանապարհային ոստիկանությունը պարտավորվում է անհատույց օգտագործման իրավունքով, սույն պայմանագրի գործողության ժամկետով իրեն ամրակցված անշարժ գույքից համապատասխան տարածք հատկացնել Կատարողին
2.14. Պայմանագրով նախատեսված ապրանքի և/կամ ծառայության մատուցման ոչ ավել քան 50 %-ը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:
2.15. Սույն պայմանագրի 1.1. ենթակետում նշված Ապրանքը ենթակա է պարտադիր ապահովագրման Կատարողի հաշվին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
2.16. Սույն պայմանագրի 2-րդ կետով չսահմանված կամ չկարգավորված՝ Ապրանքի և/ կամ ծառայության հատուկ պայմանները սահմանվում են սույն պայմանագրին կից հավելվածներով կամ լրացուցիչ համաձայնագրերով:

### 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝
3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.
3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք, իր հայեցողությամբ.
ա) Պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.
բ) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.
3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա պահանջել իր կողմից սահմանված ողջամիտ ժամկետում լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը,
3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ
ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.
բ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքների փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքներով.
3.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը,
3.1.6 Կատարողի կողմից տեղադրված Ապրանքի մինչև 50 % համամասնությամբ համակարգերի չաշխատելու, դրանց անսարքությունները Պատվիրատուի սահմանած ողջամիտ ժամկետում չվերացնելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի մինչև անսարքությունների վերացումը չվճարել Կատարողին սույն պայմանագրով սահմանված գումարը.
3.1.7. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայամագիրը.
3.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի և նրա կողմից սահմանված ողջամիտ ժամկետում կամ եթե Ապրանքի թերությունները վերացնելուց հետո դրանք կրկին ի հայտ են գալիս.
բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:
3.1.8 Ջնջել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին,
3.1.9. Կատարողից պահանջել տեղեկատվություն Ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ,
3.1.10. Եթե մատուցվել է անպատշաճ որակի ծառայություն՝ պահանջելու ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու ծագած թերությունները:
3.2 Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների և ծառայությունների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները,
3.2.2 Ստացողին հանձնված Ապրանքից և Ծառայությունից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրանց մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին.
3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում Կատարողին փոխանցել վերջինիս վճարման ենթակա վճարը, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:
3.2.4 Ապրանքի, այդ թվում նաև ծառայության, քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից,
3.2.5 Սույն պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս վնասները,
3.2.6. Պարտավորվում է իր իրավասության սահմաններում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, կանխելու բոլոր այն իրավիճակների առաջացումը, այդ թվում՝ օրենքով սահմանված կարգով առգրավում և վարչական ներգործության համապատասխան միջոցների իրականացումը, որոնց չձեռնարկումը կարող է խոչընդոտել կամ անհնարին դարձնել սույն պայմանագրով սահմանված երթևեկության կանոնների նկատմամբ վերահսկողության Համակարգերի բնականոն գործունեությունը,
3.2.7. Պարտավորվում է ապահովել սույն պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տվյալների փոխանցման հաճախականությունների դաշտ,
3.2.8. Սույն պայմանագրով սահմանված երթևեկության կանոնների նկատմամբ վերահսկողության համակարգերի միջոցով հայտնաբերված և իրեն փոխանցված խախտումների տվյալների կապակցությամբ հարուցել վարչական վարույթ, իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված վարչարարություն, այդ թվում՝ համապատասխան որոշումների, արձանագրությունների կազմումը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել վարչական պատասխանատվության ենթարկված անձանցից տույժերի, տուգանքների գումարների բռնագանձումը:
3.3 Կատարողն իրավունք ունի՝
3.3.1 Պատվիրատուի (Ստացողից) պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը և Ծառայությունը.
3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով սահմանված գումարները չվճարելու կամ վճարման կետանցով վճարելու դեպքում պահանջել վճարելու տուգանք՝ Ապրանքի գնի և հաշվետու ժամանակահատվածի համար վճարման ենթակա գումարների հանրագումարի __3_%-ի չափով:
3.3.3 Պատվիրատուից (Ստացողից) պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի և Ծառայության համար իրեն վճարման ենթակա գումարները.
3.3.4 Պատվիրատուի (Ստացողի) համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:
3.4 Կատարողը պարտավոր է՝
3.4.1 Պատվիրատուին /Ստացողին/ հանձնել /տեղադրել/ Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում.
3.4.2 Սույն պայմանագրի 2.8 կետին համապատասխան՝ Ապրանքը Պատվիրատուին (Ստացողին) մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում.
3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում.
3.4.4 Պատվիրատուին (Ստացողին) հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք.
3.4.5 Պատվիրատուին (Ստացողին) հանձնել սույն պայմանագրին կից հավելվածով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Պատվիրատուի (Ստացողի) պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր.
3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը.
3.4.7 Հետ տանել Պատվիրատուի (Ստացողի) կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը.
3.4.8 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը.
3.4.9 Պատվիրատուին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը.
3.4.10.Ծառայությունները մատուցել պատշաճ որակով՝ համաձայն սույն պայմանագրին կից հավելվածում նշված պայմանների.
3.4.11. Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից __5 տարվա ընթացքում ապահովել սույն պայմանագրի 1.3.3. ենթակետում սահմանված համակարգերի միջոցով հայտնաբերված խախտումներով վարչական իրավախախտման արձանագրության և վարչական իրավախախտման գործով որոշումների ավտոմատ տպումը.
3.4.12. Անհրաժեշտության դեպքում, 5 տարին մեկ, կամ փախադարձ համաձայնությամբ այլ ժամկետում, պատվիրատուի պահանջով, գիտատեխնիկական առաջընթացին համապատասխան ապահովել սույն պայմանագրի 1.3. ենթակետում նշված համակարգերի, ենթահամակարգերի, սարքավորումների, համակարգչային և այլ ծրագրերի արդիականացումը.
3.4.13. Սույն պայմանագրի 1.3. ենթակետում նշված համակարգերի տեղադրումն իրականացնել այնպես, որպեսզի դրանց բոլոր սարքավորումները տեսանկարահանվեն լրացուցիչ սարքավորումների կամ տեխնիկայի միջոցով,
3.4.14. սեփական միջոցներով ապահովել սույն պայմանագրի 1.1. ենթակետում սահմանված Ապրանքի բնականոն գործունեության, շահագործման, սպասարկման համար անհրաժեշտ ցանցի, կապի միջոցների, սարքավորումների /շարժական, անշարժ/ և այլ տեխնիկական միջոցների /այուների, հարմարանքների և այլն/ ձեռք բերումը և դրանց տեղակայումը, ինչպես նաև դրանց սպասարկումը /այդ թվում՝ տեխնիկական/:

## 4. Ապրանքի գինը, վճարման կարգը և ժամկետները

4.1 Սույն պայմանագրի 4.3. ենթակետում նշված գինը ենթակա չէ փոփոխության սույն պայմանագրի գործողության ընթացքում, եթե կողմերը գրավոր երկկողմանի համաձայնությամբ այլ բան չեն պայմանավորվում:
4.2. Սույն պայմանագրի 4.3. ենթակետում նշված պայմանագրի գինը ներառում է հանձնման ենթակա սույն պայմանագրի 1.1. ենթակետում նշված Ապրանքի ընդհանուր գինը /ներառյալ ԱԱՀ-ն/ և սույն պայմանագրի 1.2. ենթակետում նշված ծառայության արժեքը /ներառյալ ԱԱՀ-ն/: Ընդ որում, Սույն պայմանագրի 1.1. ենթակետում սահմանված Ապրանքի և ծառայության յուրաքանչյուր միավորի գինը սահմանվում է սույն պայմանագրին կից հավելվածներով: Սույն պայմանագրի 4.3. ենթակետում նշված գինը ներառում է նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:
4.3. Սույն պայմանագրի գինը Պատվիրատուն վճարում է Կատարողին ամսեկան, կտրվածքով
տվյալ հաշվետու ժամանակահատվածի վերջին աշխատանքային օրը՝ սույն պայմանագրի 1.3. ենթակետում նշված համակարգերով արձանագրված ճանապարհային երթևեկության համապատասխան կանոնների խախտումների արդյունքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արդեն իսկ փաստացի գանձված գումարներից՝ տոկոսային համամասնությամբ, որի չափը յուրաքանչյուր դեպքում չի կարող գերազանցել ՃԵԿ-ի խախտումների կապակցությամբ հաշվետու ժամանակահատվածում փաստացի գանձված գումարների 70%-ը, բացառությամբ սույն պայմանագրի 4.4. ենթակետում սահմանված դեպքերի, որի պարագայում կգործի սույն պայմանագրի 4.4. ենթակետում սահմանված վճարման կարգն ու չափը:
4.4.Սույն պայմանագրի 3.4.11. ենթակետով սահմանված պարտավորությունը չկատարելու դեպքում կամ դրա կատարման որևէ անհնարինության դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կատարողին վճարել սույն պայմանագրի 1.3.3. ենթակետով սահմանված երթևեկության այլ կանոնների նկատմամբ վերահսկողության համակարգերի միջոցով հայտնաբերված խախտումների համար փաստացի գանձված գումարներից ոչ ավել քան, 60%-ը:
4.5. Սույն պայմանագրի գործողության ընթացքում գնման առարկայի գինը՝9 849 562/ինևը միլիոն ութ հարյուր քառասունիևնը հազար հինգ հարյուր վաթսունվերկու/ եվրոյին համարժեք ՀՀ դրամը Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով սահմանված կարգով /4.3. և 4.4. ենթակետերով սահմանված կարգով/ ամբողջությամբ վճարելուց հետո, այդ պահից սկսած սույն պայմանագրի 4.3. կետում սահմանված տոկոսային հարաբերակցության չափը Պատվիրատուի նախաձեռնությամբ ենթակա է փոփոխման, որի դեպքում սակայն սույն պայմանագրի 1.3. ենթակետում նշված համակարգերով արձանագրված ճանապարհային երթևեկության համապատասխան կանոնների խախտումների արդյունքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արդեն իսկ փաստացի գանձված գումարներից կատարողին հասանելիք բաժինը յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածում չի կարող պակաս լինել սույն պայմանագրի 1.3. ենթակետում նշված համակարգերով արձանագրված ՃԵԿ-ի խախտումների կապակցությամբ հաշվետու ժամանակահատվածում փաստացի գանձված գումարների 50%-ից, բայց և ոչ ավել, քան 70%: Այս դեպքում սույն պայմանագրի կողմերը պարտավոր են ստորագրել լրացուցիչ համաձայնագիր:

4.6.Պատվիրատուն սույն Պայմանագրով նախատեսված վճարումները կատարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

## 5. Ապրանքի և Ծառայության որակը

5.1. Կատարողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:
5.2. Կատարողը երաշխավորում է մատուցված ծառայությունների որակը համաձայն սույն պայմանագրին:

## 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Կատարողն Ապրանքը հանձնում է, իսկ Ծառայությունը մատուցում է սույն պայմանագրով նշված Ստացողին՝ դրանում նշված ծավալներով և ժամկետներում:
6.2 Կատարողը՝ Ապրանքի սույն պայմանագրով սահմանված կարգով հանձման ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում հանձնած Ապրանքի և/կամ մատուցված ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:
6.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը և/կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:
6.4 Ապրանքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի և Ծառայության որակի և Պայմանագրով նախատեսված բոլոր ժամկետների պահպանման համար:
7.2 Կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի նկատմամբ:
7.3 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարներից:
7.4 Սույն պայմանագրի Հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու, ինչպես նաև Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,05%-ի չափով:

7.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:
7.6. Սույն պայմանագրով և դրան կից հավելվածներով՝ Կատարողի համար սահմանված պարտավորություններն ու պայմանագրի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կատարողը կրում է դրա անշահավետ իրավական հետևանքների ռիսկը և պատասխանատու է դրա արդյունքում առաջացած բոլոր, այդ թվում՝ երրորդ անձանց պատճառված, վնասի /ներառյալ բաց թողնված օգուտի/ համար: Իր հերթին Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում Կատարողի կողմից սույն պայմանագրով իր համար սահմանված և ստանձնած պարտավորություններն ու այլ պայմանները չկատարելու արդյունքում առաջացած բոլոր անշահավետ իրավական հետևանքների համար:
7.7 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
7.8 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրը ուժի մեջէ մտնում կողմերի ստորագրման և ՀՀ կառավարության կողմից տվյալ գնման ընթացակարգի արդյունքների հաստատման պահից:
9.2 Կողմերի՝ սույն պայմանագրով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են համաձայն ՀՀ օրենսդրության:
9.3. Սույն պայմանագիրը կնքվում է մինչև «30» դեկտեմբերի 2036թ-ը և գործում է մինչև կողմերի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման ավարտը: Սույն պայմանագրի գործողությունը կարող է երկարաձգվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ, պայմանով, եթե նման համաձայնությունը ձեռք է բերվում սույն կետում նշված ժամկետի ավարտից առնվազն մեկ տարի առաջ:
9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագրեր կամ համապատասխան պայմանագիր կնքելու միջոցով, որոնք կհանդիսանան սույն հիմնական պայմանագրի անբաժանելի մասը:
9.5. Սույն պայմանագիրը միակողմանիորեն կարող է լուծվել համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-469 հոդվածներով սահմանված կարգով:
9.6. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով այդպիսիք առաջանալու պահից 30 օրվա ընթացքում: Նշված ժամկետում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
9.7. Սույն պայմանագրի հետ կապված վեճի կապակցությամբ հարուցված դատական և/կամ վարչական վարույթը չի ազատում կողմերին այն պարտավորությունների կատարումից, որոնք որևէ առնչություն չունեն տվյալ վեճի հետ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:
9.8. Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի հավելվածները՝ բաղկացած --- թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
9.9. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
9.10 Նախատեսվում է, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը (կապալառուն, մատակարարը) ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին (կապալառուին, մատակարարին) հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակող-մանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմա-նագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակող-մանի լուծման հետևանքով կատարողի (կապալառուի, մատակարարի) համար առաջա-ցող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը (կապալառուն, մատա-կարարը) պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով.
9.11 Նախատեսվում է, որ պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջու-թյամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

12 Նախատեսվում է. որ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝

ա. պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

բ. եթե դա պատվիրատուի գործողության կամ անգործության հետևանք չէ.

9.13 Նախատեսվում է, որ, եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և պայմանագրի կողմը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

9.14. Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մասամբ կամ ամբողջությամբ կարող է դրվել ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային Ոստիկանություն» ծառայության վրա:

9.15. Սույն պայմանագիրը պարտադիր է Սույն պայմանագրի կողմի իրավահաջորդների համար՝ այն պայմաններով ինչ նախատեսված սույն պայմանագրով, բացառությամբ այն դեպքերի, երբ ՀՀ օրենսդրությունը կամ կողմերը այլ բան չեն սահմանում:

9.16 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԿԱ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն<br>ք. Երևան, Ծովակալ Իսակովի 9<br>ՀՀ Ֆինանսների նախարարության ոստիկանության գործառնական վարչություն<br>Հ/Հ 900013150041,<br>ՀՎՀՀ 01840082 | «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ<br>ք. Երևան, Տիգրանյան 27<br>«Ինեկոբանկ» ՓԲԸ, Արաբկիրի մասնաճյուղ<br>Հ/Հ 2050622017491001<br>ՀՎՀՀ 00087963 |
| Պետ՝ Մ. Օհանյան<br>(ստորագրություն) Կ.Տ | Տնօրեն՝ Հ. Գալստյան<br>(ստորագրություն) Կ.Տ |

«13» «06» 2011թ կնքված

Հավելված 1

« ՀՀ ԿԱ Ո ՃՈ-ԱՊՇՁԲ-11/02 » պայմանագրի

**Ապրանքի և Ծառայության տեխնիկական բնութագիր**

**ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

*Համակարգի ներդրման նպատակը*

Տրանսպորտային միջոցների (ՏՄ) երթևեկության նկատմամբ վերահսկողությունը ճանապարհների վտանգավոր և այլ տեղամասերում անշարժ և շարժական տեղադրված արագաչափերի ինչպես նաև խաչմերուկներում տեղադրված դիտարկման տեսախցիկների միջոցով սահմանված արագությունը գերազանցած և Պայմանագրով սահմանված ճանապարհային երթևեկության այլ կանոնները խախտած տրանսպորտային միջոցները հայտնաբերելու, դրանք ֆիքսված ժամանակահատվածում նկարահանելու, այդ տրանսպորտային միջոցները նույնացնելու ու համապատասխան վարչական ներգործություն իրականացնելու միջոցով, հասնել արագության գերազանցման և Պայմանագրով սահմանված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքերի նվազեցմանը:

Համակարգի կառուցվածքը

Համակարգը ներառում է՝

1. ճանապարհներին տեղակայված արագաչափ, այլ համակարգեր ու սարքավորումներ, գրանցող և նկարահանող սարք՝ այսուհետ ԱՉՏ (արագության չափման տեսախցիկ), որը պետք է հնարավորություն տա՝ • Ողջ օրվա ընթացքում մեկից մինչև հինգ երթևեկելի գոտիներով ընթացող տրանսպորտային միջոցների հոսքում հայտնաբերել սահմանված արագությունը գերազանցող, ինչպես նաև պայմանագրով սահմանված երթևեկության կանոնները խախտած տրանսպորտային միջոցը, տեսանկարահանել և տեսանյութը փոխանցել Խախտումների Արձանագրման Կենտրոն (ԽԱԿ): Տեսանյութը պետք է պաշտպանված լինի ծածկագրով և ստորագրությամբ:
2. Խաչմերուկներում տեղադրված մշտադիտարկման տեսախցիկներ (ԴՏ), որոնք պետք է հնարավորություն տան խախտումների արձանագրման կենտրոնից առողջ օրվա ընթացքում հետևել ճանապարհային երթևեկությանը և հայտնաբերել պայմանագրով նախատեսված ՃԵԿ-ի կանոնների խախտման դեպքերը:
3. Խախտումների արձանագրման կենտրոն, որի հագեցվածությունը անհրաժեշտ տեխնիկական միջոցներով և համակարգչային ծրագրերով, հնարավորություն կտա ԽԱԿ-ի սպասարկող անձնակազմին օպերատիվ և անխափան իրականացնել ներքոհիշյալ աշխատանքները՝

- պարբերաբար հավաքագրել, մշակել, դիտել, և դասակարգել ԱՉՏ-ների կողմից գրանցված խախտման դեպքերի էլեկտրոնային պատկերները:
- ԴՏ-ների միջոցով իրականացնել ճանապարհների մշտադիտարկում, հավաքագրել և արխիվացնել ՃԵԿ-ի խախտման դեպքերի և ճանապարհատրանսպորտային պատահարների տեսագրությունները
- ԽԱԿ-ում պետք է ներառվի տրանսպորտային միջոցների հաշվառման Համարանիշերի Ավտոմատ Ճանաչման համակարգ(ՀԱՃ), որը ավտոմատ կերպով համարանիշերի կողավերծանման միջոցով կկարողանա բացահայտել խախտում կատարած սահմանված կարգով հաշվառված տրանսպորտային միջոցի համարանիշը:
- համարանիշերի ավտոմատ ճանաչման համակարգի միջոցով կոդավերծանումն չապահովելու դեպքում պետք է գործի ինքնուրույն (ոչ ավտոմատ) կոդավերծանման համակարգը, որը հնարավորություն կտա օպերատորներին ինքնուրույն բացահայտելու համարանիշը:
- Խախտում կատարած տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ բացահայտումը իրականացվում է հաշվառված տրանսպորտային միջոցների ճանապարհային ոստիկանությունում շահագործվող ավտոմատ տեղեկատվական համակարգի (ՃՈ ԱԿՀ) տվյալների հենքի միջոցով:
- Այնուհետև, համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (ճանապարհային երթևեկության կանոնների), ստեղծվում է վարչական իրավախախտման արձանագրություն, ու վարչական իրավախախտման գործով որոշում:

*3. ԱՉՏ-ները և ԴՏ-ները տեղադրվում են փուլային տարբերակով.*

| | | | |
|---|---|---|---|
| • 2011թ. ընթացքում | 15 ԱՉՏ, 50 ԴՏ | ք. Երևան | 20 ԴՏ Երևան քաղաքի կենտրոնի մարդաշատ վայրերում |
| • 2012թ. ընթացքում | 50 ԱՉՏ | ք.Երևան և միջպետ. ճանապ, | 45 ԴՏ ք. Երևան |
| • 2013թ. ընթացքում | 50 ԱՉՏ | ք.Երևան և միջպետ. ճանապ, | 60 ԴՏ ք. Երևան |
| • 2014թ. ընթացքում | 50 ԱՉՏ | ք.Երևան և միջպետ. ճանապ, | 60 ԴՏ ք. Երևան |
| • 2015թ. ընթացքում | 30 ԱՉՏ | ք.Երևան և միջպետ. ճանապ, | 45 ԴՏ ք. Երևան |

4. Այլ համակարգերը տեղադրվում են փուլային տարբերակով.

• 2013թ. ընթացքում 10 հատ այլ անհրաժեշտ սարքավորումներ՝ Երևան քաղաքում
•2014թ. ընթացքում 20 հատ այլ անհրաժեշտ սարքավորումներ՝ Երևան քաղաքում և միջպետական ճանապ.
• 2015թ. ընթացքում 20 հատ այլ անհրաժեշտ սարքավորումներ՝ Երևան քաղաքում և միջպետական ճանապ.
• 2016թ. ընթացքում 20 հատ այլ անհրաժեշտ սարքավորումներ՝ ՀՀ այլ քաղաքներում և միջպետական ճանապ.
• 2017թ. ընթացքում 20 հատ այլ անհրաժեշտ սարքավորումներ՝ ՀՀ այլ քաղաքներում և միջպետական ճանապ.,

## Համակարգին ներկայացվող պահանջները

Արագության չափման տեսախցիկները և դիտարկման տեսախցիկները ԽԱԿ-ին միանում են անլար (EDGE/3G) կամ ADSL/ISDN IP ցանցով:
ԽԱԿ-ը այլ արտաքին համակարգերին միանում է պաշտպանված IP ցանցով:
Համակարգը հնարավորություն է նախատեսում հայտնաբերելու և մշակելու օրեկան մինչև 15000 խախտում:
Համակարգը հնարավորություն է նախատեսում ԽԱԿ-ից հեռահար կերպով փոփոխելու ճանապարհներին տեղադրված տեսախցիկներում ամրագրված արագության սահմանային արժեքները:
ԽԱԿ-ի մուտքային և ելքային ամբողջ տեղեկատվությունը ֆիլտրվելու է Firewall
պաշտպանող համակարգով:
Համակարգը անկախ է լինելու համակարգչային օպերացիոն համակարգից,
պահպանելու է իր աշխատունակությունը անկախ օպերացիոն համակարգի թարմացումից:
Որպես տարբերակներ՝
• Տվյալների ողջ հոսքը զտվում է հակադարձելի պրոքսիի (Revers proxy) միջոցով:
• Տեսախցիկների անվտանգությունն ապահովելու համար կիրառվելու է անվտանգության ենթահամակարգ, որը կարող է ընդգրկել PKI բաց բանալիների համակարգ՝ ստեղծելու անվտանգության վկայագրեր և էլեկտրոնային միջոց՝ այդ վկայագրերի պահպանման անվտանգությունն ապահովելու համար:

## ԽԱԿ-ին ներկայացվող պահանջները

*1.Ֆունկցիոնալ պահանջներ*
ԽԱԿ-ի տվյալների հենքը ապահոված է լինելու Oracle տվյալների հենքով.
• Արխիվացում և վերականգնում. այս գործառույթը թույլ է տալու ադմինիստրատորին սահմանված ժամակահատվածի կտրվածքով արտաքին կրիչների վրա կուտակել ԽԱԿ-ի տվյալների հենքը՝ հետագայում անհարաժեշտության դեպքում այն վերաբեռնելու համար:
• Տեսակոդավորում. տեսակոդավորումը հնարավորություն է ընձեռում օպերատորին ինքնուրույն կոդավերծանել ՏՄ համարանիշը, եթե այն հնարավոր չէ իրականացնել ՀԱՃ մոդուլի միջոցով: Օպերատորները պետք է հնարավորություն ունենան անտեսելու այն խախտումները, որոնք ենթակա չեն
մշակմանը:
• Բացառությունների կառավարում. այս մոդուլը օպերատորին հնարավորություն է տալիս գործառույթների ընթացակարգից դուրս թողնել առանձին (շտապօգնության, հրշեջ և այլն) ՏՄ-ների կողմից խախտման դեպքերը:
• ՏՄ տեսակի հսկում. եթե տեսախցիկով ամրագրված ՏՄ տեսակը չհամապատասխանում ՃՈ ԱԿՀ-ում տվյալ համարանիշով ՏՄ տեսակին, ապատվյալ խախտման փաստը անտեսվում է.
• Վկայագրում. այս մոդուլը ոստիկանին հնարավորություն է տալիս ստուգելու նվավերացնելու խախտումը, մինչ խախտման արձանագրության տպումը:
• Անտեսված խախտումների կառավարում. այս գործառույթը հնարավորություն էտալիս օպերատորին հսկել տեսակոդավորման և ստուգման փուլերումանտեսված խախտումները և արդյունքում դրանք վերականգնել:
• Վարչական իրավախախտման արձանագրության և վարչականիրավախախտման գործով որոշման ավտոմատ տպում. ԱՃՏ-ներից ստացված տեղեկատվության հիման վրա, չանտեսված խախտումների համար հայերենլեզվով, նույնականացման ծածկագրով տպագրվում է վարչականիրավախախտման վերաբերյալ արձանագրությունն ու վարչական իրավախախտման գործով որոշումը:
Որպես տարբերակներ՝
Իրավախախտները, նույնականացման ծածկագրերը օգտագործելով, հնարավորություն ունեն դիտելու ոստիկանության կայք-էջում տեղադրված խախտման նկարները:
• Տվյալների հենքի ՎԵԲ ծրագրային համակարգ. այս ծրագրային համակարգը հնարավորություն է տալու վարչական իրավախախտման գործով որոշումը էլեկտրոնային տարբերակով ուղարկել առանձին օգտագործողների՝ ճանապարհային ոստիկանության տարածքային ստորաբաժանումներ, ոստիկանության սահմանային կետեր:
• Տվյալների մշակման մոնիթորինգ. խախտման ցանկացած արձանագրման
ողջ ընթացքի վերլուծման հնարավորություն:
• Ավտոմատ կառավարման համակարգի (արագության չափման տեսախցիկների և ԽԱԿ-ի հատկորոշիչների) ձևափոխման հնարավորություն:
• Յուրաքանչյուր գրառում անձնավորեցվում է, ինչը հնարավորություն է տալիս գտնելու յուրաքանչյուր հարցում կամ տվյալների փոփոխություն կատարողին:
• ԽԱԿ-ից ԱՃՏ-ների վերահսկում, որով հնարավոր է բացահայտել տեսախցիկների վերաբերյալ տեղեկությունները և ազդարարումները:
• ԽԱԿ-ի վերահսկում. ԽԱԿ-ը վերահսկվելու է հատուկ User Interface Application համակարգի միջոցով, որն հնարավորություն է տալու բացահայտելու ԽԱԿ-ի սերվերների ազդարարումները:
• Խախտումների մշակման վերահսկում. խախտումների մշակումը ԽԱԿ-ում վերհսկվելու է ԽԱԿ-ի սերվերի ազդանշանների բացահայտման հատուկ միջոցով:
• ԱՃՏ-ների հեռակա սպասարկում. ամրագրված արագության տեսախցիկները հեռակա եղանակով սպասարկվելու են ԽԱԿ-ից: Հնարավոր կլինի նաև ամրագրված արագության տեսախցիկների ծրագրային փաթեթեների թարմացումն իրականացնել ԽԱԿ-ից:
• Որակի կառավարում. ԽԱԿ-ը ապահովելու է, որ խախտումների գրառումների շեղումները կամ որակի անբավարար լինելը բացահայտվի խախտումների մշակման ընթացակարգի բոլոր մակարդակներում:
• ԱՃՏ-ների կողմից տրամադրված տվյալների ավտոմատ կառավարում, որն ուղղված է լինելու տվյալների կառուցվածքն ու շաղկապվածությունը ստուգելուն: Ցանկացած շեղման բացահայտման դեպքում խախտումը պետք է անտեսվի և անհրաժեշտության դեպքում ահազանգվի՝ տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար:
• Տեսակոդավորման պահին իրականացվող նկարների որակի հսկում.
պատկերների շեղման բացահայտման դեպքում խախտումը անտեսվում է:
Այս ծրագիրը մասնավորապես հնարավորություն է տալիս առավել շուտ բացահայտել ԱՃՏ-ների մեխանիկական վնասվածքները:

• Յուրաքանչյուր ԱՀՏ-ի խոտանի գործակցի համեմատում սահմանված չափի հետ;
• Պարբերական հաշվետվությունների մշակման ստանդարտ ծրագրային փաթեթի առկայություն:
2. ԽԱԿ –ի ստեղծման պահանջները
2.1. Տարածքի կառուցվածքը
Պատասխանատու մարմինը պետք է առաջարկի Խախտումների մշակման կենտրոնը իր հետևյալ կարևոր ենթահամակարգերով.
• Տվյալների պահպանման և մշակման կենտրոնի տարածք
• Ադմինիստրացիայի աշխատատեղեր
• Խախտումների մշակման օպերատորների աշխատատեղեր և տպագրության սենյակ:
2.1.1. Տարածքի չափը
- 5մԱ 15 օպերատորների յուրաքանչյուրի համար
- 15 մԱ կառավարիչի համար
- 10 մԱ պահեստամասերի համար
- 10 մԱ սիստեմային ադմինիստրատորի համար
- 10 մԱ արխիվի համար
- 8 մԱ տվյալների պահպանման և մշակման համար
- 10 մԱ տպագրության համար.
2.2. ԽԱԿ-ի էլեկտրականության պահանջները
Էլեկտրականության բաշխիչ վահանը պետք է տեղադրված լինի յուրաքանչյուր սենյակում:
Պետք է ապահովվի նաև գերբեռնվածության ընդհանուր բլոկավորումը, որը կունենա վթարային էլեկտրամատակարարման հեռակառավարման համակարգ:
Էներգիայի մատակարարման յուրաքանչյուր կետը պետք է կառավարվի առանձին լծակով:
Յուրաքանչյուր սարքավորումը բաշխիչ վահանից պետք է սնուցվի ճկուն մալուխով (մեկուսացված հաղորդալար) սահմանափակվելով յուրաքանչյուրում 40ամպեր թողունակությամբ:
Համապատասխանությունը էլեկտրականության չափանիշներին. հողանցման մալուխը պետք է լինի կանաչ/դեղին գույներով;
Հողանցվող սարքավորումների համար մետաղյա տակդիրների օգտագործումը չի թույլատրվում:
Էլեկտրահաղորդման լարը պետք է ուղղված լինի տվյալների մշակմանը: Այս լարին չպետք է միացված լինի ոչ մի այլ սարքավորում (օդափոխիչ, լույս և այլն…):
Էլեկտրական հոսանքի անփոփոխ լարվածությունն ապահովելու համար, խորհուրդ է տրվում լարման կայունարարի կամ հոսանքի անխափան սնուցման սարքի օգտագործումը:

## ԱՉՏ-ի ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՐՈՇԻՉՆԵՐ

Արագության չափման տեսախցիկը կարող է տեղադրված լինել ճանապարհի եզրին գետնին, տրանսպորտային միջոցի մեջ կամ այան վրա կախված տեղանքի վերաբերյալ օգտագործողի տեղեկացվածությունից (ցանկը կցվում է).

| | |
|---|---|
| Արագության պահպանման արձանագրում | |
| Տեխնոլոգիա | Ռադար դոպլեր 24,125MHz. |
| Արագության միջակայք | 25-ից մինչև 300կմ/ժ |
| Արագության չափման ճստակեցում | մինչև 100 կմ/ժ- 3կմ/ժ<br>100կմ/ժ-ից ավել- 1% |
| Սերտիֆիկացում | Միջազգային մետրոլիգիայի կազմակերպության չափանիշներին համապատասխան |
| Արձանագրման հեռավորություն | Համակարգը պետք է նշի ստուգվող ճանապարհի համարը |
| Հեռավորության միջակայք | մինչև 5 ճանապարհ (50 մետր) |
| Ուղղություն | Արձանագրման մեթոդները. հեռացող կամ մոտեցող |
| Նկարահանում | |
| Տեխնոլոգիա | Թվային- գունավոր |
| Ընդարձակման հնարավոր չափ | Նախատեսված է պատկերների փոքր չափի և լավ որակի համար |
| Պատկերների պահանջները | Պատկերը կենտրոնացված են խախտող ՏՄ-ի վրա |
| Ֆլեշ | Արկղի մեջ տեղադրված, տեսանելի լուսային տեխնոլոգիա; էներգիայի մակարդակների կառավարում |
| Ինտերֆեյս | IEEE1394. |
| Այլ | միջավայրի լուսավորության հաղորդակ ավտոմատ տեսախցիկի նախալարքի համար |
| Տեղային պրոցեսոր | |
| Տեխնոլոգիա | Ներդրված համակարգչի կառուցվածք |
| Պրոցեսոր | Սելերոն M - 1GHZ նվազագույնը |
| Օպերացիոն համակարգ | Լինուքս |
| Օպերացիոն հիշողություն | 512MB նվազագույնը |
| Հիշողության կրիչ | կոշտ սկավառակ կամ էլեկտրոնային կրիչ |
| Հոսանքի սնուցում | |
| Տեսակը | 230VAC ; արևային (ընտրությամբ) |
| Ապահովում | մարտկոց (նվազագույնը 2 ժամ գործելաժամանակ) |
| Սպառում | 50 Վատտ (միջինում) |
| Տվյալների ինտերֆեյս | |
| Ոչ ավտոմատ | USB2.0 ; Ethernet (RJ45) |
| Ավտոմատ | Հեռարձակում ռեալ ժամանակում Խախտումների արձանագրման կենտրոնին |
| Տելեկոմ | IP տեխնոլոգիա; ADSL ռաուտեր մոդեմ; (ISDN; |

| | |
|---|---|
| | EDGE/3G)- ընտրությամբ |
| Կառավարման սենսորներ | հարված, ներխուժում, ջերմաստիճան... |
| Միջավայր | գործելու պայմանները. -35°C մինչև +45°C; 95% HR (48ժամ); IP44 (EN60529-A1) նվազագույնը |
| Հաստատում | Համապատասխանություն Եվրոմիության կանոնակարգերին (CE գնահատում) |
| Հուսալիություն | MTBF >6Kժամ ( 25°C-ի պարագայում) |
| Ֆունկցիոնալ հատկորոշիչներ | |
| Ստանդարտ | |
| Նկարահանում | Ավտոմատ և չընդատվող; 24/7 |
| | Խախտողի ճանապարհի ճանաչում |
| | Մարդատար ավտոմեքենաների - բեռնատար ավտոմեքենաների տարբերակում (երկու տարբեր արագությունների սահմանափակումներ) |
| Խախտման մասին տեղեկություն | նվազագույնը 2 գունավոր նկար (ընդհանուր պատկեր և համարանիշ) և տեքստ |
| | Խախտման արձանագրության տեղային ստորագրում և ծածկագրում մինչև խախտման մասին տեղեկության պահպանումը |
| | Չափ =< 1Մբայտ |
| | HTTPS - SSL - TCP - IP պրոտոկոլներ խախտումների արձանագրումն ԽԱԿ հեռարձակման համար |
| Հնարավորություն | Խախտման մասին տվյալների տեղում պահպանման հնարավորություն մեկ ամսից ավել ժամկետով |
| Կառավարում | Ազդանշանային հեռակառավարում. հարված, ներխուժում, ջերմաստիճանի բարձրացում, գործողության կարգավիճակ, հիշողության ծանրաբեռնվածություն, մարտկոցի լիցքաթափում, հեռարձակման որակ |
| | Սարքավորումների անսարքության բացահայտում |
| | Տեղում/հեռավար (Խախտումների արձանագրման կենտրոնից) կառուցվածք |
| | Տեղում/հեռավար (Խախտումների արձանագրման կենտրոնից) շահագործում |
| Ընտրությամբ | Միաժամանակ մի քանի ճանապարհների հսկում |
| | Վիճակագրության համար ճանապարհների բեռնվածության մասին տեղեկատվություն |
| | Խախտման մասին տեղեկություն (Հայերեն լեզվով) |

ճանապարհային երթևեկության մշտադիտարկման տեսախցիկների տեխնիկական հատկորոշիչներ

| | |
|---|---|
| Նկարահանում | Ավտոմատ և չընդատվող; 24/7 |
| Ավտոմատ | Հեռարձակում ռեալ ժամանակում Խախտումների արձանագրման կենտրոնին |
| Տելեկոմ | IP տեխնոլոգիա; ADSL ռաուտեր մոդեմ; (ISDN; EDGE/3G)- ընտրությամբ |
| Տեսագրումը և պահպանումը | Անընդհատ, թողունակությունը D1 , 25կ/վ .Խախտումների արձանագրման Կենտրոնում առնվազն 5 օր |
| Տեսախցիկի բնութագիր | (Գիշեր/ցերեկ) մատրիցան՝ sony , ոչ պակաս 1.3 ccd ոչ պակաս 540 tvl , տեսադաշտի քողարկման ֆունկցիայով |
| Կառավարումը | Ղտտվող տեսախցիկների ղեկավարումը ԽԱԿ-ից |
| | Ղտտվող տեսախցիկների պտտման արագությունը կառավարվող՝ 360աստիճան/վրկ – հորիզոնական ուղղությամբ |

| | |
|---|---|
| | 90 աստիճան/վրկ – ուղղահայաց ուղղությամբ |
| Պատկերի մոտեցման հնարավորություն (ZOOM) | Նվազագույնը՝ 30x կառավարվող արագությամբ |
| Ֆունկցիոնալ հնարավորություններ | Ավտոտրեքինգի ֆունկցիա |
| | |

Լուսացույցի Կարմիր **ազդանշանի** արկայությամբ երթևեկելու կանոնների խախտման նկատմամբ վերհսկողության համակարգի տեխնիկական հատկորոշիչներ

| | |
|---|---|
| Նկարահանում | |
| Տեխնոլոգիա | Թվային- գունավոր (10-15 Mega Pixels) |
| Տելեկոմ | IP տեխնոլոգիա; ADSL ռաուտեր մոդեմ; (ISDN; EDGE/3G)- ընտրությամբ |
| Հսկման տեսադաշտը | Առնվազն 4 երթևեկելի գոտի |
| Խախտման մասին տեղեկություն | նվազագույնը 2 գունավոր նկար (ընդհանուր պատկեր և համարանիշ) |
| | Խախտման արձանագրության տեղային ստորագրում և ծածկագրում մինչև խախտման մասին տեղեկության պահպանումը |
| | Չափ = < 1մբայտ |
| | HTTPS - SSL - TCP - IP պրոտոկոլներ խախտումների արձանագրումն ԽԱԿ հեռարձակման համար |

Խախտումների արձանագրման կենտրոնի վերաբերյալ նախատեսվող աշխատանքների շրջանակի հստակեցում

Համակարգի ներդրման պատասխանատու մարմինը համարվում է ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայությունը, որը ապահովում է ՃՈ վարչական մասում (Երևան Իսակովի 9 հասցեում) ԽԱԿ-ին ներկայացվող պահանջներին համապատասխան տարածքների հատկացումը:

Համակարգը մշակողը ապահովում է ԽԱԿ-ին անհրաժեշտ բոլոր տեխնիկական միջոցների տեղադրումն ու ծրագրային փաթեթի ներդրումը: Համակարգի սպասարկումն իրականացնելու համար մրցույթին մասնակից ոչ ռեզիդենտ կազմակերպությունները պետք է ունենան Հայաստանի Հանրապետությունում գրանցված գործընկեր:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿԱ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն
ք. Երևան, Ծովակալ Իսակովի 9
ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013150041,
ՀՎՀՀ 01840082

Պետ՝

Մ. Օհանյան

(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրանյան 27
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Արաբկիրի մասնաճյուղ
Հ/Հ 2050622017491001
ՀՎՀՀ 00087963

Տնօրեն՝

Հ. Գալստյան

(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 2
«13» 06 2011թ. կնքված
ՀՀՀ ԿԱ ճՈ-ԱՊՇՁԲ-11/02 գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման ենթակա ապրանքների, ծառայությունների | | | Գնման ենթակա ապրանքների քանակը | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափիմ հավոր | Միավորի գինը (եվրո) | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 | քանակ | գումարը (եվրո) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 1 | Երթևեկության կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգեր, այդ համակարգերի շահագործում և սպասարկում՝ այդ թվում | Կոմպլ. | 1 231 235 | | | | | | | | 1 | 1 231 235 |
| | Խախտումների արձանագրման կենտրոն | Կոմպլ | 574 767 | 1 | | | | | | | 1 | 574 767 |
| | արագության չափման, նկարահան-ման և արձանագրման տեսախցիկներ (ԱՉՏ) | հատ | 22 390 | 15 | 50 | 50 | 50 | 30 | | | 195 | 4 366 050 |
| | դիտարկման տեսախցիկներ | հատ | 5 177 | 70 | 45 | 60 | 60 | 45 | | | 280 | 1 449 560 |
| | կարմիր լույսի ազդանշանի նկատմամբ հսկողության համակարգ | կոմպլ. | 24 755 | - | - | 10 | 20 | 20 | 20 | 20 | 90 | 2 227 950 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | | | 9 849 562 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿԱ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն
ք. Երևան, Ծովակալ Իսակովի 9
ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործնական վարչություն
Հ/Հ 900013150041
ՀՎՀՀ 01840082

Պետ՝ Մ. Օհանյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐԱՐՈՂ

«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրանյան 27
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Արաբկիրի մասնաճուղ
Հ/Հ 2050622017491001
ՀՎՀՀ 00087963

Տնօրեն՝ Հ. Գալստյան
(ստորագրություն) Կ.Տ